ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ РЕСПУБЛИКА АРМЕНИЯ REPUBLIC OF ARMENIA

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ИНФОРМАЦИОННЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОЙ АССОЦИАЦИИ ПОТРЕБИТЕЛЕЙ
INFORMATION MAGAZINE OF NATIONAL ASSOCIATION OF CONSUMERS

CONSUMERS INTERNATIONAL

ՍՊԱՌՈՂ

ՍԿՍԱԾ
1997
թվականից

20 տարի Սպառողների միջազգային ասոցիացիայի (Consumers International) կազմում

ՄԱՐՏԻ 15-Ը
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

#1 ՄԱՐՏ 2018

Դարձնենք թվային շուկան առավել արդար

CONSUMERS INTERNATIONAL

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
ԱՆՆԱ Սպառողների ազգային ասոցիացիա

ՄԵԼԻՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր խմբագիր

ՍԱՄՎԵԼ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

ՆԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր

ԼԻԱ ՕՍԻՊՅԱՆ
Սննդամթերքի անվտանգության վերլուծության պատասխանատու, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԹՅԱՆ
Ասոցիացիայի փոխնախագահ, մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների պատասխանատու, սննդի ապահովման ծառայությունների սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

ԼԵՎՈՆ ԱՃԵՄՅԱՆ
Գյուղմթերքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու, Էկոլոգիայի միջազգային ակադեմիայի անդամ

ԱՆՆԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Ասոցիացիայի արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, փորձագետ

ՀԱՍՄԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ արտաքին և ներքին հարաբերությունների գծով փոխնախագահ, PR մասնագետ

ՌՈԶԱԼԻԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լաբորատորիաների գծով փորձագետ

ՎԱՐԴՈՒՀԻ ՄԵԼԻՔՅԱՆ
Ասոցիացիայի գլխավոր փորձագետ, Երևանի Պետական տնտեսագիտական համալսարանի Տեխնոլոգիաների և բնական գիտությունների ամբիոնի դոցենտ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ
Տեղեկատվության վերլուծության պատասխանատու, Երևանի Ագրարային համալսարանի դոցենտ

ԺԵՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների որակի վերլուծության պատասխանատու, Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԱԻԴԱ ԻՍԿՈՅԱՆ
Իրավախորհրդատու, ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ԱՂԱՎՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լրագրող

ՌՈՒԲԵՆ ԲՈՒԲՈՒՇՅԱՆ
Դիզայներ

ԱՐԵՎԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Լուսանկարիչ

ՍՊԱՌՈՂ
տեղեկատվական, վերլուծական, խորհրդատվական պարբերականի խմբագրական խորհուրդ

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քիմիական և ֆիզիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ամերիկյան քիմիական ընկերության և Ամերիկյան Ֆոտոկենսաբանության ընկերության անդամ

ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Բժիշկ-ճառագայթաբան, Բժշկական գիտությունների դոկտոր

ԵՐԵՄ ՉԱԽՈՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ նախագահության անդամ

ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ
Երևանի քաղաքապետի տեղակալ, Տնտեսագիտության թեկնածու

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի Արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԳԱՅԱՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՑՈԼՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Հայաստանի վաճառականների միության նախագահ

ԿԱՌԼԵՆ ԱԴԱՄՅԱՆ
ՌԴ Չափագիտության ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԱՐՄԵՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոոսֆերայի հետազոտությունների կենտրոնի տնօրեն

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի սպառողների ազգային ակադեմիա ԻԱՄ պատվավոր անդամ

ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴՈՐԱ ՍԱՔՈՒԼՅԱՆ
Մոնրեալի ՄաքԳիլ համալսարանի դասախոս, դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԻՆԱ ՎԻՆՈԳՐԱԴՈՎԱ
Սպառողների ազգային ասոցիացիայի պատվավոր անդամ

ՄԱՐՏԻ 15-Ը ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Երկրի վրա բնակվող ամեն մարդ սպառող է անկախ սեռից, տարիքից, մաշկի գույնից ու համոզմունքներից:

Սպառողն այն քաղաքացին է, որը ձեռք է բերում, գնում կամ պատվիրում է ապրանքներ՝ օգտագործելով դրանք անձնական նպատակներով կամ կենցաղում, նաև օգտվում է տարբեր ընկերությունների կողմից առաջարկվող ծառայություններից: Սպառողների իրավունքների պաշտպանությունը ժամանակակից աշխարհում մշտապես ակտուալ է այնքանով, որ ոչ ոք ապահովագրված չէ իր իրավունքների ոտնահարումից:

Սպառումը և ճիշտ ու արդար կազմակերպված առևտուրը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից են, իսկ մարդու (սպառողի) իրավունքների պաշտպանությունը՝ նման հասարակության կարևորագույն առանձնահատկություններից մեկը: Ցանկացած քաղաքակիրթ երկրում պաշտպանվում են սպառողների իրավունքները, վերահսկվում՝ արտադրանքի որակը և անվտանգությունը, բոլոր տեսակի ծառայությունների և աշխատանքների իրականացումը, կարևորվում՝ հասարակական կազմակերպությունների և սպառողների համագործակցությունը: Գերմանիայում, օրինակ, սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում գոյություն ունեն մոտ 80, Ավստրիայում՝ շուրջ 200, Ճապոնիայում՝ 50, ԱՄՆ-ում՝ մոտ 150 օրենք: Կանադայում յուրաքանչյուր մարզում կան 5-6 տեղական օրենք և հարյուրից ավելի դաշնային օրենքներ: Ընդհանուր առմամբ, զարգացած երկրներում այս ոլորտի օրենսդրական դաշտը բավականին ընդարձակ է և ներառում է սպառողների ֆիզիկական ու նյութական վնասների կանխումը կարգավորող փաստաթղթերի բավականին մեծ ցանկ, օրենքներ չափի ու կշռի, ստանդարտացման, սերտիֆիկացման ու մակնշման, մրցակցության սահմանափակման անթույլատրելիության, սպառողի իրավունքների խախտման ժամանակ դատարան դիմելու կարգի, սպառողի, որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի, բազմակողմանի պաշտպանության մասին, նաև սպառողների և արտադրողների, մատակարարների ու վաճառողների միջև գործարար հարաբերությունները կարգավորող օրենքներ, որոնք նպաստում են սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

Սպառողների իրավունքների պաշտպանությունը մշտապես զարգացող և ընդլայնվող գործընթաց է, որում դեռ կան լուծմանը սպասող խնդիրներ, այդ թվում՝

- քաղաքացիների (սպառողների) սակավ ակտիվությունն իրենց իրավունքների պաշտպանությանը, ինչն առաջին հերթին պայմանավորված է իրավունքների և պարտավորությունների մասին ոչ պատշաճ իրազեկվածությամբ,
- շուկա մտնող ապրանքների ու ծառայությունների որակի ոչ լիարժեք վերահսկողությունը,
- տնտեսվարող սուբյեկտների պատասխանատվության ցածր մակարդակը (երբեմն ավելի ձեռնտու է օրենքի խախտման համար տուգանք վճարել, քան, օրինակ, փոխել արտադրության տեխնոլոգիան և այլն),
- հասարակական սպառողական կազմակերպություններին պետական աջակցության բացակայությունը:

Սպառողների շահերի պաշտպանության գործընթացն առավել շոշափելի արդյունք կունենա, եթե.

- առավել ուշադրության արժանանան օրենքի այն կետերը, որոնք առնչվում են ապրանքի վերադարձին կամ փոխարինմանը, երաշխիքային սպասարկմանը և այլն,
- սերտ համագործակցություն սկսվի գործադիր իշխանության մարմինների և սպառողական ասոցիացիաների միջև,
- ստեղծվեն մասնագիտացված կազմակերպություններ, որոնք կիրականացնեն անկախ փորձաքննություն ապրանքների և ծառայությունների շուկայում,

- իրականացվի աջակցություն և սպառողների իրավունքների պաշտպանություն հատկապես գիտահետազոտական ոլորտում,
- ԶԼՄ-ների միջոցով տարածվի մշտական տեղեկատվություն ոլորտում կատարվող աշխատանքների, հետազոտությունների ու դրանց արդյունքների մասին,
- ապահովվի ապրանքների և ծառայությունների վերաբերյալ անաչառ տեղեկատվություն, ինչը թույլ կտա սպառողին կատարել գիտակցված ընտրություն,
- կազմակերպվեն սպառողական կրթության դասընթացներ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում,
- պետական մակարդակով իրականացվեն միջոցառումներ, որոնք կպաշտպանեն սպառողներին ԳՁՕ-ների հետ կապված հնարավոր ռիսկերից և այլն:

Այսօր աշխարհին ընդունում է սպառողների 8 իրավունք, որոնցից չորսը սահմանվել են ԱՄՆ 35-րդ նախագահ Ջոն Քենեդու, մյուս չորսը՝ Սպառողների միջազգային ասոցիացիայի (Consumers International - CI) կողմից: Դրանք են.
- անվտանգության իրավունքը,
- տեղեկատվություն ստանալու իրավունքը,
- ընտրության իրավունքը,
- լսված լինելու իրավունքը,
- հիմնական կարիքները բավարարելու իրավունքը,
- վնասների փոխհատուցման իրավունքը,
- սպառողական կրթության իրավունքը,
- առողջ միջավայրի իրավունքը:

Սպառողների միջազգային կազմակերպությունը, որն ունի ավելի քան 200 անդամ կազմակերպություն աշխարհի ավելի քան 100 երկրում, այդ թվում նաև՝ 1998 թ. անդամագրված Սպառողների ազգային ասոցիացիան, մշտական ուշադրության կենտրոնում է պահում հետևյալ հիմնախնդիրները.
- շրջակա միջավայրի պահպանություն (այլընտրանքային էներգետիկայի զարգացում, օզոնային շերտի պահպանում և այլն),
- վտանգավոր ապրանքների և տեխնոլոգիաների վաճառքի կանխում,
- միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում գլոբալ ստանդարտների մշակում,
- դեռևս լիովին չուսումնասիրված հակաբիոտիկների, սննդային հավելումների գենոմոդիֆիկացված սննդամթերքի ընդունում,
- հիվանդության աղբյուրներ հանդիսացող ապրանքների արտադրության վերահսկողություն,
- առանց թունաքիմիկատների և անվտանգ արտադրանքի տարածմանը նպաստող քարոզարշավ,
- զարգացող երկրներին սպառողական կրթությանը նպաստող նյութերով ու գրականությամբ ապահովում և այլն:

ՏԱՐՎԱ ԿԱՐԳԱԽՈՍԸ

2018 թվականի համար Սպառողների միջազգային ասոցիացիան հորդորում է առաջնորդվել հետևյալ կարգախոսով՝ **Դարձնենք թվային շուկան առավել արդար:** Սա ենթադրում է առցանց առևտրային հարթակների համագործակցություն, ինչի արդյունքում առցանց առևտուրը կդառնա առավել մատչելի, ապահով ու արդար ամբողջ աշխարհի սպառողների համար:

Էլեկտրոնային առևտուրը լայն հնարավորություն է ընձեռում առցանց տիրույթում գնումներ կատարելու կամ ծառայություններից օգտվելու, մասնավորապես՝ վճարվող գումարի դիմաց պատվիրելու մշակութային

իրադարձությունների կամ տրանսպորտային միջոցների տոմսեր, հյուրանոցային համարներ՝ խնայելով ժամանակ ու ջանքեր միաժամանակ: Սակայն այս ամենն այնքան հեշտ ու հարմար չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից, քանի որ ապահով ու արդար թվային շուկայի ծառայությունից օգտվել ցանկացող սպառողը հաճախ կարող է խաբեության կամ խարդախության զոհ դառնալ: Ուստի Սպառողների միջազգային ասոցիացիան առաջարկում է միավորվել, հետևել, աջակցել ու նաև մասնակիցը դառնալ այն բոլոր միջոցառումների, որոնք կիրականացվեն 2018-ին ու կնպաստեն թվային շուկան առավել արդար դարձնելուն:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սպառողը պարտավոր է.

- ծանոթանալ ապրանքին մինչև այն օգտագործելը, կարդալ կից հրահանգները, ծանոթանալ պահպանման պայմաններին՝ կանխելու համար հնարավոր վտանգներն ու անհարմարությունները, քանի որ ապրանքի ոչ ճիշտ օգտագործման հետևանքով ծագած խնդիրների համար ընկերությունը պարտավոր չէ այն անվճար նորոգել կամ հատուցել նյութական վնասը,
- գնված ապրանքի թերությունների կամ այլ խնդիրների ծագման դեպքում անմիջապես դիմել վաճառքի կետ կամ վաճառողին,
- պահպանել ապրանքի գնումը կամ ծառայությունից օգտվելու հանգամանքը հաստատող փաստաթղթերը (չեկ, պայմանագիր, ՀԴՄ և այլն)՝ հնարավորինս հեշտորեն լուծելու համար ծագած խնդիրները:

Հիշեք՝ վաճառողը պատասխանատու է միայն իր կողմից վաճառվող ապրանքի համար:

Սպառողն իրավունք ունի.

- պահանջելու և ստանալու ապրանքներ և ծառայություններ, որոնք համապատասխանում են իր պահանջներին, կյանքի համար անվտանգ են, և որոնց տիրապետումն ու օգտագործումն արգելված չեն օրենքով,
- ձեռք բերելու անհրաժեշտ և ճշգրիտ տեղեկատվություն ու պարզաբանումներ առաջարկվող ապրանքների (որակ, թիվ, տեսականի, արտադրող և այլն) և ծառայությունների, նաև դրանց հետ կապված հնարավոր ռիսկերի մասին,
- ստանալու տեղեկություն սպառողների իրավունքների և սպառողական ոլորտի վերաբերյալ, իսկ իրավունքների խախտման դեպքում՝ նաև խորհրդատվություն և աջակցություն,
- ստանալու նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցում,
- խախտված իրավունքների պաշտպանության համար դիմելու դատարան և այլ լիազորված պետական մարմիններ, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպություններ, այդ թվում՝ Սպառողների ազգային ասոցիացիա:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Այսօր առևտուրը կարևորագույն տեղ է զբաղեցնում մեր կյանքում, քանի որ առևտրային հարաբերությունների մեջ մտնելով է սպառողը ձեռք բերում այն, ինչն անհրաժեշտ է ապրելու համար՝ սննդից մինչև հագուստ, կենցաղային տեխնիկայից մինչև տրանսպորտային միջոցներ:

Համացանցի ընձեռած բազմաթիվ հնարավորություններից մեկն էլ էլեկտրոնային առևտուրն է, որն առցանց հարթակում կատարվող ապրանքների կամ ծառայությունների առք ու վաճառքն է կամ փոխանակումն առանց տնից դուրս գալու, օրվա ցանկացած ժամի:

Առավելությունները

- հնարավորություն է տալիս միաժամանակ ընտրելու և համեմատելու մեծ թվով ապրանքներ, նաև ծանոթանալու այն մարդկանց կարծիքներին, որոնք արդեն օգտվել են նման ծառայությունից (ցավոք, ոչ բոլոր առևտրային կայքերն են այսպիսի հնարավորություն ստեղծում, իսկ ավելի հաճախ օգտվում են կեղծ օգտատերերի ծառայություններից, որոնք տվյալ ապրանքի մասին միայն դրական կարծիքներ են հայտնում),
- թույլ է տալիս օգտվել առաքման ծառայությունից, քանի որ նման եղանակով վաճառվող ապրանքները հիմնականում առաքվում են:

Թերությունները

- առևտրի այս եղանակը հնարավորություն չի տալիս ապրանքը շոշափելու կամ մանրամասն զննելու,
- հաճախ ծառայություններ մատուցող կամ ապրանքներ վաճառող ընկերության կամ անհատի, գնված ապրանքի վերադարձի երաշխիքային պայմանների մասին տրվում է ոչ ամբողջական տեղեկատվություն,
- երբեմն արժեքը չի ներառում տեղափոխման ծախսը կամ միջնորդավճարը, ուստի անհրաժեշտ է այս հարցերը պարզաբանել նախօրոք:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Առցանց գործարքներ կատարելիս՝ գերադասելի է օգտվել առավել հայտնի ընկերությունների կայքերից, քանի որ կան էլեկտրոնային շուկայում գործունեություն իրականացնող կայքեր, որոնք պատշաճ գրանցում չունեն և հակերական գործողություններով ապօրինաբար գանձումներ են կատարում:
2. Նախապես պետք է ճշտել, թե ոչ պատշաճ որակի ապրանքի վերադարձի դեպքում որ կողմն է հոգալու տեղափոխման ծախսերը:
3. Անձնական տվյալները գաղտնի պահելու համար ցանկալի է առցանց գործարք կատարել սեփական համակարգչից: Հակառակ դեպքում հարկավոր է գործարքից հետո վերբեռնել նույն կայքը՝ համոզվելու համար, որ անձնական տվյալները չեն պահպանվել:

Սպառողների ազգային ասոցիացիան Սպառողների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ ևս մեկ անգամ ներկայացնում է Սպառողների իրավունքների պաշտպանության մասին ՀՀ օրենքի համապատասխան հոդվածը պատշաճ որակի ապրանքը փոխարինելու մասին, ինչի իմացությունը հաստատուն քայլ է դեպի սեփական իրավունքների պաշտպանություն ու հնարավորություն կարգավորելու վաճառակետերում ծագած խնդիրները սեփական ուժերով՝ առանց կողմնակի միջամտության: Սրա անհրաժեշտությունը պայմանավորված է հատկապես սպառողներից ստացվող դիմում-բողոքների մեծ քանակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 26.06.2001

Հոդված 23. Պատշաճ որակի ապրանքը փոխարինելու սպառողի իրավունքը

1. Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը նմանօրինակ ապրանքով այն վաճառողի մոտ, ումից ձեռք է բերել ապրանքը կամ վաճառողի կողմից հայտարարած այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձևով, եզրաչափքերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ, բացառությամբ կառավարության սահմանած անվանացանկով ապրանքների։

Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը տասնչորս օրվա ընթացքում՝ չհաշված գնման օրը, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել:

Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված ապրանքային կամ դրամարկղային չեկը:

2. Եթե սպառողի՝ վաճառողին դիմելու օրը վաճառքում նմանօրինակ ապրանքը բացակայում է, ապա սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ լուծել առուվաճառքի պայմանագիրը և պահանջել հետ վերադարձնելու նշված ապրանքի համար վճարված գումարը կամ փոխարինել այն նմանօրինակ ապրանքով՝ վաճառքում համապատասխան ապրանքի առաջին իսկ ստացման դեպքում: Վաճառողը պարտավոր է ոչ պարենային ապրանքի փոխարինումը պահանջող սպառողին հայտնել վաճառքում այդ ապրանքի ստացման մասին:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Իսրայել

1981 թ. ընդունված Սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենքը հստակ սահմանում է սպառողի նկատմամբ վաճառողի հիմնական պարտականությունները: Օրինակ՝ վաճառողին չի թույլատրվում խոսքի կամ խեղաթյուրված գովազդի միջոցով մոլորեցնել սպառողներին: Փաստաթղթում նշված են ապրանքների և ծառայությունների 20 հիմնական պարամետրեր, որոնք հստակ պիտի ներկայացվեն վերջիններիս: Դրանք են ծառայությունների կամ ապրանքների տեսակը, քաշը, արտադրության վայրը, գինը, տեղեկություններ ծառայություն մատուցողի, վաճառվող ապրանքի թերությունների (եթե կան) կամ ապրանքի վերադարձի պայմանների մասին և այլն:

Օրենքն արգելում է չարաշահել սպառողի համար ստեղծված բարդ իրավիճակը՝ լեզվի չիմացություն, ֆիզիկական խնդիրներ և այլն:

Մեծ Բրիտանիա

Մեծ Բրիտանիայում 1999 թ.-ից գործում է օրենք՝ համաձայն որի գնված ապրանքը կարող է վերադարձվել վաճառակետ երրորդ անձի կողմից: Սրա համար անհրաժեշտ է գնում կատարելիս վաճառողին խնդրել նշում կատարել կտրոնի վրա այն մասին, որ տվյալ ապրանքը ձեռք է բերվում որպես նվեր:

Շվեդիա

Այստեղ գերխնդիր է սպառողի առողջության ու անվտանգության պաշտպանությունը: «Ապրանքների անվտանգության մասին» օրենքը թույլ է տալիս պետական և հասարակական կազմակերպություններին իրականացնել վերահսկողություն ու արգելել ընդունված ստանդարտներին ոչ համապատասխան մթերքների արտադրությունը: Սպառողները լիովին վստահում են պետական և հասարակական կազմակերպություններին, որոնք ցանկացած մեծ ու փոքր կոնֆլիկտ հարթում են տեղում: Արտադրողներն իրենց հերթին շահագրգռված են վնասը փոխհատուցել անմիջապես, իսկ անորակ ապրանքը դուրս բերել շուկայից՝ խուսափելով մեծ տույժերից: Նաև Շվեդիայում գոյություն ունի խախտումների գրանցման և դրանց օպերատիվ արձագանքի մասին էլեկտրոնային տվյալների բազա:

Բոլոր վաճառողները հստակ տիրապետում են հաճախորդների հետ փոխհարաբերությունների կարգին:

Իտալիա

Այստեղ սպառողն իրավունք ունի համապատասխան մարմիններին դիմելու և փոխհատուցում ստանալու, եթե իր իրավունքները խախտվել են ոչ ճիշտ գովազդի հետևանքով, մասնավորապես՝ տրամադրվել է թյուր տեղեկատվություն տվյալ ապրանքի գնի, տվյալ պահին գործող զեղչի, որակի կամ պատրաստման եղանակի մասին:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ԱՄՆ-ում գնված ոչ պարենային ապրանքը կարելի է վերադարձնել գնելու պահից սկսած մինչև երեք ամսվա ընթացքում: Օրինակ՝ 90 օր երաշխիքային ժամկետ ունեցող հեռուստացույցը կարելի է վերադարձնել 89-րդ օրը՝ այն պարզ պատճառաբանությամբ, որ, ասենք, հեռուստացույցի գույնը չի համապատասխանում այն պահարանի գույնին, որի վրա դրված է:

Մի շարք խանութներում գործում են առանձին բաժիններ, որտեղ 50 և ավելի տոկոս զեղչով վաճառվում են վերադարձված ապրանքները:

2018 թ. առաջին եռամսյակի մարքեթինգի և մոնիթորինգային հետազոտությունների արդյունքները



Սպառողների ազգային ասոցիացիան ներկայացնում է իր կողմից իրականացվող մոնիթորինգային գործընթացի արդյունքները՝ ուսումնասիրություններ կատարելով սպառողական շուկայում իրացվող հացաբուլկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքի, հյութերի և ըմպելիքների, պաղպաղակի, մսամթերքի, թռչնամսի և ձվի, ոգելից և ոչ ոգելից խմիչքների, խոհարարական կիսապատրաստվածքների, հանրային սննդի, նաև բուսական և կենդանական յուղերի արտադրման և իրացման ոլորտներում:

Այս եռամսյակ ուսումնասիրվել են ավելի քան 300 մեծ ու փոքր առևտրային կազմակերպություններ և երկու տասնյակի հասնող սննդի արտադրական ձեռնարկություններ:

Հացաբուլկեղենի, ալրային և շաքարային հրուշակեղենի արտադրություն

Ինչպես հայտնի է, այս ոլորտը Սպառողների ազգային ասոցիացիայի մշտական ուշադրության կենտրոնում է: Օգտագործելով հնարավոր ցանկացած առիթ՝ մենք անդրադառնում ենք արտադրվող և իրացվող հացի որակին և գործընթացին ամբողջությամբ: Ոլորտը կարևոր է այնքանով, որ հացը համարվում է ստրատեգիական նշանակության սննդամթերք, իսկ մեր պաշարները կարող են բավարարել միայն 4-5 ամիս, հետևաբար հացահատիկը մեր երկրում հիմնականում ներկրվում է: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Ասոցիացիայի նախաձեռնությամբ, ԱԺ որոշ պատգամավորների ու համակարգի լավագույն մասնագետների միջոցներով մշակվեց հացի արտադրումն ու իրացումը կանոնակարգող օրենքի նախագիծը, սակայն ցավով պիտի փաստել, որ իշխանությունը կարևորություն չտվեց հարցին, և առաջարկն անտեսվեց:

Այսօր էլ Ասոցիացիան շարունակում է ամենայն խստությամբ վեր հանել ոլորտի բարձիթողի ու խայտառակ վիճակը, երբ գրեթե ամենուր իրացվում են անհայտ ծագման (իրացվող արտադրանքի մոտ մեկ երրորդը), բարձր խոնավությամբ, տեսակին չհամապատասխանող, ոչ լիարժեք մակնշմամբ, կասկածելի հավելանյութերով (փխրեցուցիչ, բարելավիչ, վիտամիններ) արտադրվող հաց և հացամթերք: Նշենք նաև, որ իրացվող հացի մոտ 40 տոկոսն առաքվում է ոչ մասնագիտացած փոխադրամիջոցներով՝ որպես տարա օգտագործելով հիմնականում բանանի տուփերը, որոնք երկար ճանապարհի տեղափոխելուց առաջ մշակվում են հատուկ

նյութերով, հետևաբար պիտանի չեն կարող լինել այլ մթերքի, հատկապես հացի համար, որն օգտագործելուց առաջ ոչ լվացվում է, ոչ ջերմային մշակման ենթարկվում: Այս մասին եթե ոչ արտադրողն ու իրացնողը, ապա վերահսկող կազմակերպությունները պարտավոր են իմանալ:

Ոլորտում առկա է մեկ կարևոր խնդիր ևս: Երբեմն տարեկանի, երկրորդ կամ երրորդ տեսակի հացի (սև հաց) արտադրությունում օգտագործվում են գունանյութեր («Կիրպիչ», «Գեղամա» և այլ ընկերություններ): Նույնքան անմխիթար է վիճակը նաև փուռ-խանութներում, որտեղ խախտվում են և սանիտարահիգիենիկ նորմերը, և վառարանից հանելուց հետո 2-3 ժամ հանգստանալու պահանջը:

Հանուն արդարության պիտի ասել, որ այսօր վիճակը համեմատաբար լավանում է այն առումով, որ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն ուշադրության կենտրոնում է պահում փոխադրամիջոցների ու տարաների խնդիրը, ու նաև օր օրի ավելանում է բարեխիղճ արտադրողների թիվը, ինչը նաև Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների՝ տարիների համառ աշխատանքի արդյունքն է:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ այնուամենայնիվ դեռ գործում են անբարեխիղճ արտադրողներ՝ «Գեղամ Մուրադյան» («Գեղամա» ապրանքանիշ), «Հեկտոր Մանվելյան», «Միրաժ», «Ալվարդ Մարգարյան», «Գայլա Բաղդասարյան», «Լիզա Վարդանյան», «Վարդան և Մոնիկա», «Էդուարդ Մինասյան», «Սուսաննա Շահինյան», «Նիկոլայ Մելքոնյան», «Արմեն Հովհաննիսյան», «Սոնա-Ելենա», «Վարազդատ Մանուկյան», «Վարդուհի Մուրադյան», «Անժելա Ասրյան», «Օտ Իրինի», «Ոսկե հատիկ», «Տորթեր Մարինայից», «ԷՄ ընդ Կա» և այլ ընկերություններ:

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ընկերություն

Որպես շաքարային և ալրային հրուշակեղենի արտադրության ոլորտի առաջատար, հանդես է գալիս սպառողի վստահությանն արժանացած «Գրանդ Քենդի» ընկերությունը, որի արտադրանքը կարողանում է շուկայից դուրս մղել ցածրորակ արտադրանքն ու անբարեխիղճ արտադրողներին: Այսօր ընկերությունն արտադրում է ավելի քան 400 անուն արտադրատեսակ, այդ թվում՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներ՝ բարձր գնահատված սպառողների կողմից, քաշային և հատային խմորեղեն, կարամելի և շոկոլադի մեծ տեսականի, նաև վաֆլիներ, աղի ձողիկ և այլն: Ամբողջ Անդրկովկասում միայն «Գրանդ Քենդի» ընկերությունն է մշակում կակաո հատիկավոր:

Կաթ-կաթնամթերքի արտադրություն

Այս ոլորտում Սպառողների ազգային ասոցիացիայի կատարած մշտադիտարկման արդյունքներով տարիներ շարունակ լավագույն տասնյակում կայուն տեղ են զբաղեցնում հետևյալ ընկերությունները.

- **Թամարա,**
- **Չանախ,**
- **Աշտարակ-կաթ:**

Վերջիններիս արտադրանքը տեսականու բազմազանությամբ, մակնշման գործընթացով և տեղական որակյալ հումքի ձեռքբերմամբ բավարարում է Ասոցիացիայի խստապահանջ հանձնաժողովի պահանջները:

Մսամթերքի արտադրություն

Այս եռամյակ լավագույն տասնյակում (ըստ իրացման ծավալների) շարունակում են կայուն տեղ զբաղեցնել հետևյալ ընկերությունները.

- **ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻ,**
- **ԱԹԵՆՔ,**
- **ԲԵԿՈՆ ՊՐՈԴՈՒԿՏ,**
- **ԱՌԴԵԼԻԿԱՏԵՍ,**
- **ՑԱՐԻՑԻՆՈ (Царский продукт ապրանքանիշ),**
- **ԲԱԲԻԿ 90 («Դի Ջի Միթ Ֆուդ» ապրանքանիշ),**
- **ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐ ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ («ԳԳԳ» ապրանքանիշ),**
- **ԼՈՒՍԱ:**

Հյութերի և ըմպելիքների արտադրություն, թռչնամսի և ձվի ոլորտ

Ցավոք, այս բնագավառներում լավագույն տասնյակում տեղական ոչ մի ար-տադրող ընդգրկված չէ: Փաստենք, որ մասնավորապես՝ հյութերի և ըմպելիքների ոլորտում Հայաստանում իրացվելու նպատակով արտադրվող հյութերի որակը շեշտակիորեն նվազել է:

Ինչ վերաբերում է թռչնի կերին, ապա Ասոցիացիան ուսումնասիրում է դրանում օգտագործվող հավելանյութերի որակը, ինչից հետո մշտադիտարկման արդյունքները կներկայացվեն հանրությանը:

Ոգելից խմիչքների արտադրություն

Տարիներ շարունակ լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել երկու արտադրողներ՝ «Շամպայն գինիների գործարանը» և «Պռոշյանի կոնյակի գործարանը»:

ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Հայաստանում միակ ընկերությունը, որն արտադրում է շամպայն գինիների ողջ տեսականին ավանդական մեթոդով ֆրանսիական տեխնոլոգիայով դասականից մինչև հավաքածու, Շամպայն գինիների գործարանն է: Այն ունի միջազգային չափանիշներին համապատասխան արտադրության տեխնոլոգիա, որակի հսկման լաբորատորիա, բարձրակարգ մասնագետներ: Արտադրանքն ամբողջովին սերտիֆիկացված է:

Տեսականին բազմազան է՝ շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կիսաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Կարմիր խաղուն գինի «Տիգրան Մեծ», Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր), խաղողի գինիներ (Ֆրանս, Վայք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերածնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր), մրգա-պտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի գինի, Սև հաղարջ, Միկադո (Սալորի կիսաքաղցր գինի), կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):

ՊՌՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Պռոշյանի կոնյակի գործարանի արտադրանքն ունի բարձր որակ, ներկայանալի տեսք և հրաշալի համային հատկանիշներ, ինչն արդյունք է պարբերաբար ներդրվող նորագույն տեխնիկական միջոցների, հմուտ և փորձառու մասնագետների նվիրված աշխատանքի:

Գործարանում արտադրվում են 3-30 տարվա հնության հայկական կոնյակներ (Մանե, Պապ թագավոր, Շիրազ, Չարենց, Արծրունի, Արփինե, Վարդան Մամիկոնյան, Արմենուհի, Խենթ և այլն)՝ պատրաստված Արարատյան դաշտի խաղողի լավագույն տեսակներից, լիկյորներ ու նորագույն տեխնոլոգիաներով արտադրված լավագույն մրգային՝ նռան, սալորի, սև հաղարջի, բալի, ծիրանի, սերկևիլի, մոշի գինիներ:

Գործարանի բարձրորակ արտադ-

րանքն իրացվում է Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Բելառուսում, Վրաստանում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Լեհաստանում և այլուր:

ՍԱՆ ՖՈՒԴ ընկերություն

ՍԱՆ ՖՈՒԴ ընկերությունն առաջատար տեղ է զբաղեցնում սփրեդ և յուղ արտադրող հայաստանյան ընկերությունների շարքում: Նա շուկայում հայտնի է Империя Вкуса և Царское ապրանքային նշաններով հալած յուղերով (խառնուրդներ):

Ընկերության հաջողություններն արդյունք են արտադրության, մարքեթինգի և վաճառքի ճիշտ կազմակերպման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ու բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավվածության:

Այս բարձրորակ արտադրանքը, պատրաստված է բացառապես բնական բուսական ճարպերից և յուղերից, չի պարունակում պահածոյացնող նյութեր ու խոլեստերին, հետևաբար թույլատրելի է օգտագործելը և դիետիկ սննդում, և պասի շրջանում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՈՒՆԴ

Ասոցիացիան մշտապես ուշադրության կենտրոնում է պահում հանրային սննդի ոլորտը՝ կարևորելով սպառողների առողջության և շրջակա միջավայրի պահպանությունը: Մոնիթորինգի անցկացման համար հիմք են ծառայում «Առևտրի և ծառայությունների մասին» և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքներից բխող պահանջները, մասնավորապես՝ ճշտվում են.

- ընդհանուր սանիտարական վիճակը,
- աշխատակիցների բուժզննման ժամանակին իրականացումը,
- արտադրող, սպասարկող անձնակազմի (խոհարար, բարմեն, մատուցող) համապատասխանությունն իրենց ներկայացվող պահանջներին,
- ձեռք բերվող մթերքներին ուղեկցող փաստաթղթերը,
- անհրաժեշտ առևտրա-տեխնոլոգիական սարքավորումների առկայությունը,
- օբյեկտի համապատասխանությունը ՇՉԿ գործող նորմերին:

Հարկ է նշել, որ հանրային սննդի շատ կետեր չեն ապահովում նշված պահանջների մեծ մասը: Թերացումներով աչքի են ընկնում հատկապես ԱՁ Կամո Ադամյան «Խորտկարանը», ԱՁ Գոհար Թորոյան «Խորտկարանը», «Հակոբ-Տ» ընկերության սրճարանը, «Աննա ՍՊԸ» խորտկարանը, «Կրիստալ» բար-կարաոկեն, Բաշ Ապարան ընկերության «Ապարան» բուֆետը, «Բալենի Ա.Կ.» խոհարարական խանութը, ԱՁ Էդուարդ Ղազարյան «Խորտկարանը», «Նոր թոնրատուն» և «Հացատուն» խորտկարանները, Մալաթիա շուկայի տարածքում գործող N16 ԱՁ Նազիկ Դանիելյան, N23 ԱՁ Աննա Հովհաննիսյան, N26 ԱՁ Լուսինե Մաթևոսյան, N39 ԱՁ Սվետլանա Մեջլումյան, N41 ԱՁ Գայանե Դարբինյան բուֆետները:

Ցավալի է, որ հաճախ բացթողումներ են գրանցվում նաև շքեղ արտաքին ու կահավորանք ունեցող ռեստորաններում՝ «Զովունի», «Միրաժ», «Եվրոպա», «Ծիրանենի»:

Այդուհանդերձ մոնիթորինգային աշխատանքները շարունակվում են: Դրանց կարող են մասնակցել նաև սպառողները՝ կապ հաստատելով 010 24 92 04 հեռախոսահամարով:

ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ընկերություն

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորի գործունեության գերնպատակը բաժանորդների գոհունակությունն ու հասարակության բարօրությունն ապահովելն է: Գործունեության ընթացքում նա զգալի թվով նախագծեր է իրականացրել Հայաստանի բոլոր մարզերի զարգացման նպատակով: ՎիվաՍել-ՄՏՍ-ը սպասարկման կենտրոններ ունի հանրապետության ամբողջ տարածքում:

ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ ընկերություն

Արդեն 11 տարի «Էյ-Ի-Ջի Սերվիս» ընկերությունն իրականացնում է գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկում, կենցաղային գազասպառման համակարգերի, սարքավորումների, դրանց հավաքակցման հանգույցների և դետալների ներկրում ու իրացում, նախագծային և շինարարական աշխատանքների կատարում մեր երկրի ողջ տարածքում (մանրամասն՝ էջ 14):

ՍԵԼԵՆԱ ՍԵՐՎԻՍ ընկերություն

Այս ընկերությունը գերժամանակակից լավագույն տեխնոլոգիաների շնորհիվ՝ իրականացնում է մաքրման և խնամքի աշխատանքներ, նաև լվացքի ծառայություն հյուրանոցային պարագաների և չոր/խոնավ մաքրում անհատական հագուստների համար՝ առաջարկելով ընդհանուր, ստանդարտ և պրեմիում կարգի ծառայություններ: «Սելենա Սերվիս» ընկերության մշտական պատվիրատուների ցանկում են Հայաստանի ամենահեղինակավոր և բարձրակարգ հյուրանոցներն ու ռեստորանները, այդ թվում՝ Մարիոթը, Թուֆենկյանը, Վիլլա դե Լենդան, Եվրոպան, Սալոնը, Շարլը, Լա Պիացցան, Աի Լեոնին և շատ ուրիշներ:

ՎԵՐԴԵ ընկերություն

«Վերդե» սրահն իրականացնում է քիմիական և բնական մաքրում: Նա մշտապես համագործակցում է իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler, BUFA և այլ ընկերությունների հետ: Սրահի պաշտոնական կայքում (www.verde.am) ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

«Վերդե» ընկերությունն օգտագործում է միայն շրջակա միջավայրը չաղտոտող, անվնաս նյութեր:

ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ

«Վի-Էլ-Վի Սենթր» էլեկտրատեխնիկայի խանութների ցանցը կայուն տեղ ունի կենցաղային, խոհանոցային և համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և մանրամեծածախ վաճառքով զբաղվող ընկերությունների շարքում: Այստեղ ներկայացված են աշխարհում հայտնի բրենդների էլեկտրատեխնիկա (HISENSE, SONY, SAMSUNG, LG, PHILIPS, VIKASS, PANASONIC, BOSCH, SIEMENS, SHARP, ZANUSSI, ELECTROLUX, SIMFER, BOMPANI, SUPER GENERAL,

INDESIT, CANON, NIKON, TEFAL, TOSHIBA, HITACHI, BRAUN, DELONGHI GROUP և այլն) և բարձրակարգ սպասքի տեսականի:

«Վի-Էլ-Վի Սենթըր» աշխարհում ինովացիոն համակարգեր ստեղծող առաջատար HISENSE, SIMFER և չինական հայտնի VIKASS ընկերությունների պաշտոնական և էքսկլյուզիվ ներկայացուցիչն է Հայաստանում: Նա նաև SONY, PHILIPS, DELONGHI GROUP ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչն է և SAMSUNG ու LG ընկերությունների պաշտոնական գործընկերը:

ԷԼԲԱՏ ընկերություն

Հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունում թողարկվում են կապարաթթվային կուտակչային մարտկոցներ գրեթե բոլոր տիպի ավտոմեքենաների համար: Ընկերությունն ապահովում է մարտկոցների երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում:

«Էլբատ» ընկերությանը 2011 թ. Quality Austria ավստրիական կազմակերպության կողմից շնորհվել է Որակի կառավարման համակարգի ISO 9001:2008 միջազգային սերտիֆիկատ:

Հ. Գ. Սպառողների ազգային ասոցիացիան, որպես սպառողների շահերի անկողմնակալ պաշտպան, անդրադարձ է կատարում Հետք.am կայքի 01.02.2018 թ. հրապարակած հոդվածին՝ համաձայն որի կաթնամթերքի իրացման շուկայի վիճակն այնքան էլ հուսադրող չէ, քանի որ լաբորատոր փորձարկման ենթարկված տասն ընկերություններից յոթի արտադրանքը չի համապատասխանում սահմանված նորմերին: Ելնելով վերոնշյալից Ասոցիացիայի Որակի վերլուծական հանձնաժողովը (21 մարդ) փաստում է, որ այս հոդվածն առավել քան խուճապ առաջացնելու և հայրենական արտադրողներին վարկաբեկելու նպատակ ունի, ուստի ստորև շարադրվում են մեր մասնագետների մի քանի դիտարկումներ այս խնդրի վերաբերյալ:

1. Հետք.am կայքը, նման գործընթաց իրականացնելիս, պետք է համագործակցի սպառողների շահերը պաշտպանող որևէ Հասարակական կազմակերպության հետ:
2. Ոչ թափանցիկ գործելաոճի հետևանք է ամեն անգամ փորձաքննությունը նույն լաբորատորիային՝ «Ստանդարտ դիալոգին» վստահելը:
3. Հոդվածում տեղեկացվում է, որ հրապարակման պահին փորձաքննված խմբաքանակն այլևս առկա չէ, սակայն փաստենք, որ փորձաքննության համար վերցվում է մի քանի փորձանմուշ, որոնցից փորձաքննվում է միայն մեկը: Մյուսները, սահմանված կարգի համաձայն, պահվում են սառնարանում՝ հարկ լինելու դեպքում փորձաքննությունը կրկնելու համար: Արտադրողի կողմից նշվող թույլատրելի 6-10 օրը վերաբերում է վաճառք իրականացնելու ժամկետին:
4. Մասնագետների պնդմամբ՝ բոլոր տասն արտադրանքները պետք է փորձաքննության ենթարկվեին նույն պարամետրերով և ոչ թե մեկում ստուգվեր, օրինակ՝ բուսական յուղի, մյուսում՝ մանրէների առկայությունը և այլն:
5. Ոչ մի խոսք չի ասվում այն մասին, թե ինչ պայմաններում է կատարվել նմուշառումը, և ինչպես է նմուշը հասցվել լաբորատորիա:

ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ԳԱԶԱՍՊԱՌՈՒՄ «ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

2010 թվականի մարտ ամսին սկսել է գործել ՀՀ տարածքում գազասպառման կենցաղային համակարգերի տեխնիկական սպասարկումն իրականացնող «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի Անվտանգության համակարգերի և միջոցների տեխնիկական սերվիս կենտրոնը: Այն հավատարմագրվել է Չափագիտության ազգային ինստիտուտի կողմից:

Ներտնային գազասպառման համակարգերում անվտանգության մակարդակի բարձրացման և պատահարների կանխարգելման նպատակով դեռևս 2007 թվականի սկզբին ՀՀ կառավարության 22.02.2007 թ. N 314-Ն և 31.01.2008 թ. N 330-Ն որոշումներով սահմանվել է գազասպառողների բնակարանների ներանցնող մասում տեղադրել վթարային անջատիչ կափույր և այրվող գազերի ազդանշանային սարք: Այն նպատակ ունի գազազգայուն սարքավորումների տեղադրման միջոցով հնարավորինս նվազեցնելու բնակելի շենքերում և գազասպառող այլ օբյեկտներում տեխնածին աղետների քանակը:

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 06.06.2008 թ. թիվ 305 Ա որոշմամբ թույլատրել է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ին (ներկայիս՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ) մրցութային կարգով իրականացնել վթարային անջատիչ կափույրների և այրվող գազերի ազդանշանային սարքերի ձեռքբերում: Մրցույթում հաղթող է ճանաչվել չինական PUHAI Corporation ընկերությունը և կնքվել է մատակարարման պայմանագիր:

ՀՀ ողջ տարածքում 2008 թվականի դեկտեմբերի 1-ից սկսվել է անվտանգության համակարգերի տեղադրման բուն գործընթացը: 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ գազասպառող բաժանորդների բնակարաններում և առանձնատներում տեղադրվել են 666 887 ազդանշանային սարքեր և անջատիչ կափույրներ (անվտանգության սարքեր): Գործընթացն արագացնելու և ընկերության առջև ծառացած լայնամասշտաբ ու պատասխանատու խնդիրը պատշաճ որակով լուծելու նպատակով «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ում ստեղծվել է Անվտանգության համակարգերի և միջոցների տեխնիկական սերվիս կենտրոնը, որը գազասպառող բնակչության անվտանգությունն ապահովելուն ուղղված կարևոր

օղակ պետք է հանդիսանա: ՀՀ-ում սույնով իրականացվում են անվտանգության համակարգերի տեղադրման, դրանց սպասարկման ու երաշխիքային վերանորոգման՝ նախադեպը չունեցող աշխատանքներ: Ընդ որում, Հայաստանն առաջինն է ԱՊՀ երկրների ցանկում, որտեղ գազասարքերից օգտվելիս մարդկային սուբյեկտիվ գործոնը հնարավորինս նվազեցնելու, տեխնածին աղետները կանխելու նպատակով իրականացվում է անվտանգության համակարգերի զանգվածային տեղադրում: Նշենք նաև, որ ՀՀ-ն ԱՊՀ երկրների թվում առաջինն է, որտեղ ներդրվել է անվտանգության համակարգերի ստուգման, թեստավորման և վերանորոգման՝ ժամանակակից սարքավորումներով հագեցած տեխնիկական սերվիս կենտրոն:

2008 թվականի դեկտեմբերի 1-ից անվտանգության համակարգերի առկայությամբ կանխվել է գազի արտահոսքի մոտ 2000 դեպք: Սա նշանակում է, որ նույնքան ընտանիք, ինչու ոչ, նաև նրանց հարևանները, խուսափել են դժբախտ պատահարներից (թունավորում, պայթյուն), ինչը ենթադրում է նաև մահացության դեպքերի հավանականություն:

Ձայնազդանշանային սարքը տեղադրվում է պատին և միացվում էլեկտրասնուցման վարդակին: Այն արձագանքում է բնական և շմոլ գազերի, ինչպես նաև օդի բարձր ջերմաստիճանի (70°C և ավել) առկայության դեպքում: Անվտանգության համակարգն ունի 2 հիմնական հանգույց՝ ձայնազդանշանային սարք և անջատիչ կափույր: Եթե հաշվի առնենք, որ պայթյունավտանգ է համարվում միավոր ծավալում բնական գազի 5-15 %-ը, ապա տվյալ սարքերը կարգաբերված են այնպես, որ արձագանքեն 0.5-1 % գազի արտահոսքի առկայության դեպքում: Այսինքն՝ նույնիսկ նվազագույն գազի արտահոսքի դեպքում անմիջապես տրվում է ձայնազդանշան, սարքի վրա վառվում է կարմիր լույս և 30 վայրկյանի ընթացքում կափույրը փակում է գազի մուտքը բնակարան: Շմոլ գազի դեպքում, որն առավել վտանգավոր է, ազդանշան է տրվում 0.015 %-ի առկայության դեպքում: Այսպիսով, ձայնազդանշանային սարքի միջոցով գազի նվազագույն արտահոսքի դեպքում տեղի է ունենում գազամատակարարման դադարեցում առանց բաժանորդի միջամտության:

Անջատիչ կափույրը տեղադրվում է հաշվիչից հետո բնակարան մտնող գազի խողովակի վրա: Այն աշխատում է, երբ ահազանգում է ազդանշանային սարքը (նրանք էլեկտրականությամբ փոխկապակցված են), և գազի մուտքը բնա-



կարան մի քանի վայրկյանից ավտոմատ արգելափակվում է: Անվտանգության սարքերը նույնպես սպասարկում են «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ փականագործները:

Ընկերությունում արձանագրվող կանչերի վերլուծությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ դեպքեր կանխվել են հենց ձայնազդանշանային սարքերի օգնությամբ: Ցավոք, թունավորման դեպքերը հաճախ բնակիչների կողմից անվտանգության սարքերի ինքնակամ անջատումների հետևանք են:

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ընկերության Անվտանգության համակարգերի և միջոցների տեխնիկական սերվիս կենտրոնը համալրված է բոլոր ժամանակակից այն սարքավորումներով, որոնք անհրաժեշտ են անվտանգության համակարգերի սպասարկումն իրականացնելու համար: Սերվիս կենտրոնում գործող հիմնական սարքավորումները թեստավորման և ախտորոշման ստենդներն են: Պարբերաբար ուսումնասիրվում է համաշխարհային շուկան՝ որակյալ սպասարկում ապահովելու համար: Սարքերի վերանորոգումը բացառապես կատարվում է Ընկերության լաբորատորիայում, քանի որ այսպիսի տեխնիկական կենտրոն ունի միայն «Էյ-Ի-Ջի Սերվիս» ընկերությունը: Այդ սարքերը վերանորոգվելուց, լիարժեք ստուգում անցնելուց հետո միայն հանձնվում են շահագործման: Ընկերության մասնագետներն ունեն մասնագիտական բարձր որակավորում և շատ հաճախ իրենք են նախաձեռնություն ցուցաբերում և արձագանքում յուրաքանչյուր նորամուծության:

Անվտանգության համակարգերի՝ վթարային անջատիչ կափույրների և ազդանշանային սարքերի ախտորոշումն ու թեստավորումն ընթանում են 3 հիմնական փուլով և 3 համալիր ստենդների միջոցով: Առանձին ստենդների միջոցով իրականացվում են անվտանգության համակարգի էլեկտրամագնիսական անջատիչ կափույրի, ազդանշանային սարքի ստուգման, ապա նաև գազազգայուն տարրերի (սենսորներ) փոխարինման աշխատանքները:

Անհրաժեշտության դեպքում ստուգման և վերանորոգման փուլերն անցնելուց հետո ազդանշանային համակարգը հաշվառվում է և փաթեթավորվում, այսինքն՝ կրկին պատրաստ է շահագործման:

Հաշվառումը ներառում է յուրաքանչյուր ազդանշանային համակարգի վերաբերյալ անձնագրային տեղեկություններ, տեղեկություն տեղադրման օրվա, ստուգումների և վերանորոգումների ամսաթվերի մասին: Այս նպատակով սերվիս կենտրոնում ստեղծվել է համակարգչային տեղեկատվական բազա:

Սերվիս կենտրոնում ձեռք են բերվել նաև շարժական սարքեր, որոնց միջոցով պրոֆիլակտիկ ստուգումներ են իրականացվում տեղում, առանց համակարգը կենտրոն տեղափոխելու: Երբ բնակարանում ազդանշանային սարքը գործում է, և բնակիչն ահազանգում է, մասնագետներն այդ սարքի միջոցով հենց բնակարանում կարող են որոշել ազդանշանի անսարքության պատճառը: Անսարքության բացահայտման դեպքում անվտանգության համակարգը փոխարինվում է նորով, իսկ վնասված սարքը բերվում է սերվիս կենտրոն ստուգման և անհրաժեշտության դեպքում՝ վերանորոգման: Ի դեպ, ազդանշանային սարքի կառուցվածքը ներառում է հիշողության համակարգ (սև արկղ), որտեղ տվյալները պահպանվում են 25 ժամվա ընթացքում: Այսինքն՝ մասնագետը ներկայանալով բնակարան կարող է աշխատանքային համակարգչի համապատասխան ծրագրի միջոցով ազդանշանային սարքից կարդալ, թե ինչ է տեղի ունեցել բնակարանում՝ շմոլ գազի առկայությու՞ն, մեթանի արտահո՞սք, թե՞ սարքի խափանում:

ՄԻ՛ ԱՆՋԱՏԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՄՆՈՒՑՈՒՄԻՑ

Անվտանգության համակարգը շատ կարևոր գործառույթ ունի մեր տներում ու բնակարաններում: Այն ներառում է այրվող գազերի ազդանշանային սարքը, որն իրականացնում է այրվող գազերի՝ մեթանի և շմոլ գազի ծավալային մասի վերահսկումը: Չափում է միջավայրի ջերմաստիճանն ու անհրաժեշտության դեպքում ձայնային և լուսային ազդանշմամբ տեղեկացնում վտանգի մասին: Սարքն ունի անջատիչ կափույր, որը վթարային իրավիճակներում փակում է գազի մուտքը բնակարան՝ ապահովելով ձեր անվտանգությունը:

ՀԱՐԳԵԼԻ՛ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ

Եղե՛ք ուշադիր գազի օգտագործման ժամանակ և պահպանե՛ք անվտանգության կանոնները, զգույշ եղե՛ք բնական գազ օգտագործելիս, իսկ բնակարանում գազի հոտի առկայության դեպքում անհապաղ հայտնե՛ք գազի վթարային շուրջօրյա ծառայություն՝ զանգահարելով 1-04 հեռախոսահամարով, նաև պարտադիր փակե՛ք գազասարքերի բոլոր փականները, բացե՛ք պատուհաններն ու դռները, օդափոխե՛ք տարածքը, կրակ մի՛ վառեք, մի՛ միացրեք և մի՛ անջատեք էլեկտրականությունը և էլեկտրական սարքավորումները, էվակուացրե՛ք բնակարանում գտնվող անձանց չգազավորված տարածք, սպասե՛ք մինչև վթարային ծառայության ժամանումը:

Դժբախտ պատահարներից խուսափելու համար անհրաժեշտ է խստագույնս պահպանել անվտանգության տեխնիկական կանոնները և կատարել բնական գազից օգտվելու բոլոր պահանջները: Կոչ ենք անում բոլոր բաժանորդներին լինելու պատասխանատու և պահպանելու անվտանգության կանոնները: Միայն հետևելով այս խորհուրդներին՝ կարող եք ապահովել ձեր անվտանգությունը, որը կախված է միայն ձեզանից:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է

+374 (10) 23-93-27 +374 (10) 29-75-31
aeg@aegservice.am www.aegservice.am

«Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ
Հասարակայնության հետ կապերի բաժին

Ծխախոտի օգտագործման տարածվածությունը ՀՀ-ում, հետևանքները և ձեռնարկվող միջոցառումները

Համաձայն ԱՀԿ տվյալների՝ յուրաքանչյուր տարի ծխախոտի օգտագործման հետևանքով աշխարհում մահանում է 6 միլիոն մարդ, որից 600.000-ը զոհ են գնում երկրորդային ծխի ազդեցությանը[1]: Ծխախոտի օգտագործումը և երկրորդային ծուխը բացասական են ազդում մարդու առողջության վրա կյանքի բոլոր փուլերում, մասնավորապես՝ պտղի զարգացման ընթացքում ծխախոտը մեծացնում է մեռելածնության ցուցանիշը և կարող է պատճառ դառնալ բնածին արատների, նորածնության շրջանում կարող է հանգեցնել մանկան հանկարծակի մահվան սինդրոմի, մանկության և դեռահասության շրջանում առաջացնում է շնչառական, 30-ից բարձր տարիքում՝ սրտանոթային հիվանդություններ, կյանքի հետագա փուլերում[2], կարող է պատճառ հանդիսանալ շնչառական համակարգի հիվանդությունների և քաղցկեղի (հատկապես թոքի):

Երկրորդային ծուխը պարունակում է քաղցկեղածին նյութեր: Այն լուրջ վնաս է հասցնում առողջությանը (ինսուլտ, թոքի քաղցկեղ և սրտանոթային հիվանդություններ մեծահասակների մոտ, վերարտադրողական առողջության խնդիրներ (ցածր քաշով երեխաների ծնունդ)՝ կանանց մոտ, շնչառական հիվանդություններ երեխաների ու մեծահասակների մոտ, նաև հանկարծակի մանկամահացություն)[3]:

Համաձայն ԱՀԿ ուսումնասիրությունների՝ ծխախոտին են վերագրվում ոչ վարակիչ հիվանդություններից շնչափողի, բրոնխների և թոքերի քաղցկեղի հետևանքով մահացության 85 և սրտի իշեմիկ հիվանդության հետևանքով մահացության դեպքերի 16 %-ը: Վարակիչ հիվանդությունների դեպքում տուբերկուլյոզի մահացության դեպքերի 26 և ստորին շնչառական վարակների հետևանքով մահացությունների 24 %-ը[4] վերագրվում են ծխախոտի օգտագործմանը:

Ծխախոտի օգտագործման տնտեսական վնասները

Առողջապահության վրա ծախսված գումարի կեսի չափով գումար հայ ընտանիքները ծախսում են ծխախոտի սպառման համար, իսկ կրթությանը հատկացվող գումարը երեք անգամ ավելի քիչ է, քան ծխախոտի ձեռք բերմանը բաժին հասնող գումարը:

Ծխախոտի օգտագործումը ՀՀ-ում

Համաձայն ԱՀԿ տվյալների՝ ՀՀ-ն բնակչության շրջանում ծխախոտի օգտագործման ցուցանիշով (26.9 %)[5] աշխարհում զբաղեցնում է 33-րդ, իսկ տղամարդկանց շրջանում ծխախոտի օգտագործմամբ՝ 11-րդ տեղը (52.3 %)[6]: Ծխող բնակչության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս,

1 ԱՀԿ զեկույց, 2015, Ծխախոտի օգտագործման համաշխարհային միտումները 2000-2025, http://www.who.int/tobacco/publications/surveillance/reportontrendstobaccosmoking/en/

2 ԱՀԿ, Եվրոպական գրասենյակ, http://www.euro.who.int/en/health-topics/disease-prevention/tobacco/data-and-statistics/effects-of-tobacco-on-health

3 US Department of Health and Human Services. The Health Consequences of Smoking—50 Years of Progress: A Report of the Surgeon General, 2014, https://www.surgeongeneral.gov/library/reports/50-years-of-progress/index.html

4 ԱՀԿ, Եվրոպական գրասենյակ, http://www.euro.who.int/en/health-topics/disease-prevention/tobacco/data-and-statistics/effects-of-tobacco-on-health

5 ԱՀԿ, Տվյալների բազա, 2015, http://apps.who.int/gho/data/node.sdg.3-a-viz?lang=en

6 ԱՀԿ, Տվյալների բազա, http://gamapserver.who.int/gho/interactive_charts/tobacco/use/atlas.html

որ ծխող տղամարդիկ հատկապես շատ են 20-34 տարիքային խմբում՝ 64.4 %, ինչն անհանգստացնող և բարձր ցուցանիշ է:

Մեկ այլ կարևոր առողջապահական խնդիր է դեռահասների շրջանում ծխախոտի տարածվածությունը: Համաձայն միջազգային փորձի ուսումնասիրության՝ դեռահասների և երիտասարդների շրջանում ծխախոտի օգտագործման նվազեցման լավագույն ռազմավարություններն են.

- ծխախոտի վտանգների մասին տեղեկացվածության և կրթության բարելավումը՝ սկսած դպրոցական տարիքից,
- անչափահասներին ծխախոտի վաճառքի արգելքը և արգելքի իրականացման ապահովումը,
- ծխախոտի գնի բարձրացումը հարկերի ավելացման միջոցով:

Ծխախոտի օգտագործման հետևանքով հիվանդացության ցուցանիշները ՀՀ-ում շնչափողի, բրոնխների, թոքի քաղցկեղով հիվանդացության դեպքերը 2015 թ. ՀՀ-ում տղամարդկանց մոտ մոտ վեց անգամ (1564 դեպք) ավելի շատ են եղել, քան կանանց մոտ (269 դեպք):

Հակածխախոտային օրենսդրության կիրառումը և արդյունքները (միջազգային փորձ)

Միջազգային փորձի և հատկապես արևմտյան երկրների վերջին քսան տարիների հակածխախոտային պայքարի քայլերի հաջորդականությունը ցույց է տալիս, որ ծխելու կրճատմանն ուղղված քաղաքականությունները հաջողված են միայն այն դեպքում, երբ դրանք բազմակողմ են, այսինքն՝ խնդրին մոտենում են միաժամանակ մի քանի կողմից՝ ներառելով օրենսդրական փոփոխությունները (ծխախոտի օգտագործման ամբողջական արգելք հանրային վայրերում, ծխախոտի գովազդի արգելք, անչափահասներին վաճառքի արգելք), բնակչության կրթումը և տեղեկացվածության բարձրացումը (քարոզարշավներ, դպրոցական ծրագրեր, առողջ ապրելակերպը խրախուսող մեսիջների տարածում), համապատասխան խորհրդատվական ծառայությունների տրամադրումը ծխելը թողնել ցանկացող անձանց (թեժ գծի առկայություն, համապատասխան նիկոտինային հավելումների տրամադրում) և գնային ճիշտ քաղաքականությունը (ծխախոտի գնի բարձրացում հարկերի միջոցով, ինչը բերում է բնակչության լայն զանգվածների համար ծխախոտի ֆինանսապես ոչ հասանելի դառնալուն):

Հակածխախոտային օրենսդրության փոփոխության սպասվող արդյունքները ՀՀ-ում

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակածխախոտային օրենսդրության խստացումը կհանգեցնի ծխախոտի օգտագործման կրճատման, երկրորդային ծխի ազդեցության նվազման և կունենա առողջապահական և տնտեսական դրական հետևանքներ ՀՀ բնակչության համար: Առողջապահական մասով կնվազեն մահացությունը և վաղաժամ մահացությունը ոչ վարակիչ հիվանդություններից:

Ծխախոտի օգտագործման նվազեցումը կունենա նաև տնտեսական օգուտներ, մասնավորապես.
• առողջապահական ուղղակի ծախսերի (ծխելու հետևանքով առաջացած ոչ վարակիչ հիվանդությունների բուժման հետ կապված ծախսեր) կրճատում.
• անուղղակի ծախսերի (հիվանդության հետ կապված ծախսեր, այդ թվում՝ ճանապարհածախս, հիվանդի խնամք և այլն) կրճատում,
• առողջապահական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում,
• վաղաժամ մահացության կրճատում, ինչը կնպաստի տնտեսապես ակտիվ բնակչության ավելացմանը,
• տնային տնտեսությունների մակարդակում ծախսերի ավելի արդյունավետ կառավարում, ինչը նշանակում է, որ ծխախոտի ձեռք բերման համար ծախսվող գումարը (3.3 %) կարող է հատկացվել սննդի ձեռքբերմանը կամ առողջապահությանը / կրթությանը՝ նպաստելով տնային տնտեսությունների կենսապայմանների և կյանքի որակի բարելավմանը:

Հակածխախոտային օրենսդրության փոփոխությունը թույլ կտա կատարել ԱՀԿ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի, որի անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը, հիմնական պահանջները, մասնավորապես.
• հարկային և գնային քաղաքականության միջոցով նվազեցնել ծխախոտի օգտագործումը,
• արգելել ծխախոտի գովազդը և հովանավորչությունը,
• ստեղծել ծխախոտի ծխից ազատ աշխատանքային և հանրային տարածքներ,
• ծխախոտի տուփերի վրա տեղադրել տեսանելի և հիմնավոր զգուշացումներ ծխախոտի վնասակարության մասին:

Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վաճառվող ծխախոտի նվազագույն գնի շեմը բարձր պահելուն, քանի որ ընդհանուր գների բարձրացման դեպքում մարդիկ հակված են գնելու շուկայում առկա ամենաէժան ծխախոտը, ինչը կարող է հանգեցնել առավել ցածր որակի ծխախոտի լայնածավալ սպառմանը[7]: Հետևաբար գնային քաղաքականության միջոցով շուկայում առկա ամենաէժան ծխախոտի գինը/բազային գինը պետք է ևս միշտ բարձր պահվի:

7 Trends in the use of premium and discount cigarette brands: findings from the ITC US Surveys (2002–2011), 2014, http://tobaccocontrol.bmj.com/content/23/suppl_1/i48

Օդի մաքրում, երկրորդային ծխի չափագրում

Ծխախոտի երկրորդային ծուխն իրենից ներկայացնում է գազի և մասնիկների խառնուրդ: Նրա ազդեցությունը վնասակար է թե՛ ծխողի, թե՛ չծխողի համար: Ծխախոտի ծուխը պարունակում է 7000-ից ավելի քիմիական միացություններ: Այս քիմիկատներից 250-ը հայտնի են որպես վնասակար, իսկ առնվազն 69-ը՝ որպես քաղցկեղածին նյութեր:

Երկարատև կտրվածքով ծխախոտի երկրորդային ծուխը նպաստում է ծխելու հետ կապված հիվանդությունների (թոքի քաղցկեղ, սրտի կաթված, ուղեղի կաթված, շնչառական օրգանների հիվանդություն, մանուկների հանկարծամահության սինդրոմ (ՄՀՄՍ), երեխաների շրջանում վերին շնչառական օրգանների վարակներ, ականջային վարակներ և ծանր ասթմա) առաջացմանը:

Ծխախոտի դեմ պայքարի ԱՀԿ Շրջանակային կոնվենցիայի 8-րդ հոդվածը նախատեսում է իրավական պարտավորություններ այն բոլոր երկրների համար (181 երկիր), որոնք վավերացրել են այդ կոնվենցիան՝ կիրարկելու համար ազգային արդյունավետ հակածխախոտային քաղաքականություն: Հայաստանը հիշյալ Կոնվենցիան վավերացրել է 2004 թ.: Անդամ երկրները միաձայն ընդունել են այն ուղեցույցները, որոնք աջակցում են կողմերին բավարարել 8-րդ հոդվածով ներկայացված պարտավորությունները: Այս ուղեցույցներում հայտարարված է, որ շենքերի ներքին հասարակական վայրերը, աշխատատեղերը և հանրային տրանսպորտը պետք է համարվեն 100 տոկոսով չծխողների տարածքներ:

Հայաստանը 2005-ին ընդունել է հասարակական վայրերում ծխախոտի մասով մասնակի սահմանափակումներ: Այնուամենայնիվ, օրենքը թույլ է տալիս ունենալ ծխելու համար սահմանված տարածքներ (ԾՍՏ) շատ հասարակական, այդ թվում՝ հյուրընկալության վայրերում՝ ռեստորաններ, բարեր և սրճարաններ:

2017 թ. նոյեմբերին Հայաստանի մայրաքաղաք Երևանում Սպառողների ազգային ասոցիացիայի և միջազգային փորձագետների կողմից անցկացվել է օդի որակի մոնիթորինգային ուսումնասիրություն: Համեմատվել են օդի աղտոտվածության մակարդակներն այն վայրերում, որտեղ ծխելը թույլատրվում է, և այնտեղ, որտեղ այն 100 տոկոսով արգելված է: Դիտարկվել են 30 ռեստորան, սրճարան և բար, որոնցից 5-ում ծխելը 100 տոկոսով արգելված էր, 12-ում առկա էին ծխելու համար հատկացված վայրեր և չծխողների տարածքներ, իսկ 13-ում ծխելը թույլատրվում էր ողջ տարածքում: Այն հաստատություններում, որտեղ առկա էին ծխողների և չծխողների հատվածներ, չափումները կատարվել են երկու վայրերում էլ:

Այրվող ծխախոտից արտանետվում են մեծ քանակով փոքրիկ մասնիկներ, որոնք հեշտությամբ ներթափանցում են թոքերի մեջ: Այդ մասնիկները՝ $PM_{2.5}$, ծխախոտի ծխով աղտոտման լավ ցուցանիշ են: Սովորական աշխատանքային ժամերին յուրաքանչյուր վայրում օդի աղտոտվածության վնասակար խտացումները չափելու համար օգտագործվել է SidePak Aerosol Monitor կոչվող սարքը, որով ծխախոտի ծխի աղտոտման ազդեցությունը չափվել է աշխարհի ավելի քան 60 երկրում: $PM_{2.5}$ մակարդակների արդյունքները գնահատվել են՝ օգտագործելով ԱՀԿ օդի նպատակային որակի 10 մգ/մ^3 ցուցանիշը, որն օգնում է պաշտպանել առողջությունն օդի աղտոտվածությունից, ինչպես նաև ԱՄՆ շրջակա միջավայրի պահպանության գործակալության (EPA) կողմից մշակված Օդի որակի ինդեքսը, որն օգնում է չափել աղտոտված օդը և զգուշացնել առողջությանը սպառնացող վտանգների մասին:



PM$_{2.5}$ արդյունքները
PM$_{2.5}$ մակարդակը փակ վայրերում, Երևան, Հայաստան

Յուրաքանչյուր վայրում չափումներն իրականացվել են մոտ 30 րոպե, և արձանագրվել է հետևյալը.

- այն վայրերում, որտեղ ծխելը թույլատրված է ամենուրեք, գրանցվել է PM$_{2.5}$-ի ծայրահեղ բարձր մակարդակ (միջինը 600 մգ/մ³), այսինքն՝ ԱՀԿ-ի կողմից սահմանված PM$_{2.5}$-ի մասով օդի որակի չափանիշներից 60 անգամ բարձր,
- ծխելու համար սահմանված տարածքներում գրանցվել է օդի աղտոտման բարձր մակարդակ (միջինը 115 մգ/մ³), այսինքն՝ ԱՀԿ-ի կողմից սահմանված PM$_{2.5}$-ի մասով օդի որակի չափանիշներից 11.5 անգամ բարձր,
- չծխողների համար սահմանված տա-րածքներում գրանցվել է օդի աղտոտման բարձր մակարդակ (միջինը 85 մգ/մ³), այսինքն՝ ԱՀԿ-ի կողմից սահմանված PM$_{2.5}$-ի մասով օդի որակի չափանիշներից 8.5 անգամ բարձր,
- 11 վայրերում, որտեղ ծխելը թույլատրվում էր ամենուրեք, ծխելու համար սահմանված 5 և չծխողների համար նախատեսված 1 տարածքներում կատարված չափումները ցույց են տվել, որ PM$_{2.5}$ մասով ԱՄՆ EPA-ի կողմից սահմանված մակարդակը գերազանցվել է ավելի քան 150.5 μg/m³-ով,
- այն վայրերում, որտեղ ծխելն արգելված էր ամբողջությամբ, գրանցվել է աղտոտման համեմատաբար ցածր մակարդակ՝ ավելի քան 19 անգամ ցածր, քան այն վայրերում, որտեղ ծխելը թույլատրվում էր ամենուրեք (միջինում 31 մգ/մ³ համեմատած 600 մգ/մ³):



Հանքային պարարտանյութերը և դրանց ճիշտ կիրառումը

Գյուղատնտեսական մշակաբույսերի բնականոն աճի և բարձր բերքատվության համար հողը պետք է ապահովված լինի մակրո- (ազոտ, կալիում, ֆոսֆոր, կալցիում, մագնեզիում) և միկրոտարրերով (երկաթ, ցինկ, պղինձ, բոր, մանգան, կոբալտ և այլն): Նշված տարրերից ցանկացած մեկի անբավարարությունը կարող է էապես ազդել մշակաբույսերի, ֆունկցիոնալ կենսագործունեության վրա:

Յուրաքանչյուր վեգետացիայի ընթացքում մշակաբույսերն աճի զարգացման և բերքի ձևավորման ամբողջական փուլում հողից կլանում են մեծ քանակով հանքային տարրեր: Այսպես, օրինակ՝ աշնանացան ցորենը մեկ հեկտար հողից հեռացնում է մոտ 94 կգ ազոտ, 40 կգ ֆոսֆոր (P_2O_5), 76 կգ կալիում (K_2O), եգիպտացորենը՝ համապատասխանաբար 143, 59, 221 կգ, շաքարի ճակնդեղը՝ 313, 72, 315 կգ, խաղողը՝ 60, 50, 100 կգ: 100 ցենտներ բերքի ձևավորման համար լոլիկը պահանջում է 33 կգ ազոտ, 11.4 կգ ֆոսֆոր, 45.3 կգ կալիում, վարունգը՝ համապատասխանաբար 27.5, 14.6, 44.2 կգ, կաղամբը՝ 41, 14, 49 կգ, սոխը՝ 44.2, 11.6, 21.0 կգ, գազարը՝ 23.3, 10.2, 38.0 կգ: Հետևաբար եթե հող չվերադարձվեն օգտագործված հանքային տարրերը, ապա այն աստիճանաբար կաղքատանա և անկարող կլինի ապահովել մշակաբույսերի նորմալ աճը, զարգացումն ու բերքատվությունը:

Իհարկե, բերված թվերը հարաբերական են: Մշակաբույսերի կողմից հանքային տարրերի օգտագործման չափը կախված է մի շարք գործոններից՝ հողի և մշակաբույսի տեսակից, բնակլիմայական պայմաններից, հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման առանձնահատկություններից, բերքի քանակից, ագրոտեխնիկայից և այլն:

Հանքային տարրերով հողի պարարտացումը հիմնականում իրականացվում է անօրգանական և օրգանական պարարտանյութերով:

Ազոտական պարարտանյութերը լինում են առանձին և կոմպլեքս ձևով: Զուտ ազոտական պարարտանյութեր են սելիտրան (նատրիումական և ամոնիակային), միզանյութը կամ կարբամիդը, միզանյութաֆորմալդեհիդը և հեղուկ ազոտական պարարտանյութերը: Կոմպլեքս ազոտական պարարտանյութերը բացի ազոտից կարող են պարունակել նաև ֆոսֆոր, կալիում, կալցիում, ծծումբ, քլոր, երկաթ, մագնեզիում, բոր, ցինկ, պղինձ, մոլիբդեն և այլ տարրեր:

Ֆոսֆորի նկատմամբ բույսերի պահանջը բավարարվում է ինչպես հողում առկա պաշարներից, այնպես էլ հանքային և օրգանական պարարտանյութերի հաշվին: Հարկ է նշել, որ հողում առկա ֆոսֆորի պաշարներից միայն ոչ մեծ մասն է մատչելի բույսերին, իսկ օրգանական միացություններում պարունակվող ֆոսֆորը գործնականում չի յուրացվում բույսերի կողմից:

Ֆոսֆորական պարարտանյութերից ամենատարածվածը սուպերֆոսֆատն է ($Ca(H_2PO_4)_2H_2O$), որը սովորաբար միայն կալցիումի մոնոֆոսֆատ չի պարունակում: Այն տարբեր նյութերի խառնուրդ է, որում գիպսի քանակը կարող է հասնել մինչև 40 տոկոսի: Սուպերֆոսֆատը համակողմանի պարարտանյութ է և կարելի է կիրառել բոլոր տեսակի հողերում: Բույսերի համար, որպես կալիումի աղբյուր, ծառայում են հողում, գոմաղբում և այլ թափոններում առկա նրա միացությունները, ինչպես նաև

հանքային պարարտանյութերը, որոնցից ամենատարածվածը քլորական կալիումն է (KCl), որում կալիումի (K2O) պարունակությունը տատանվում է 50-60 տոկոսի սահմաններում: Գոյություն ունեն նաև քլորական կալիումի 30-40 տոկոսանոց աղեր: Շատ տարածված է նաև կալիումի սուլֆատը (K2SO4), որում K2O-ի պարունակությունը տատանվում է 45-52 տոկոսի սահմաններում:

Բույսերի համար շատ կարևոր տարր է նաև մագնեզիումը, քանի որ այն մտնում է քլորոֆիլի բաղադրության մեջ: Ներկայումս ավելի հաճախ օգտագործվում են ոչ թե միայն մագնեզիում պարունակող, այլ այնպիսի կոմպլեքս պարարտանյութեր, որոնք բացի մագնեզիումից պարունակում են նաև ազոտ, ֆոսֆոր, կալիում և նույնիսկ միկրոտարրեր:

Հանքային պարարտանյութերից ամենատարածվածն ազոտ, ֆոսֆոր և կալիում պարունակող կոմպլեքս պարարտանյութերն են՝ ամոֆոսը, կալիումական սելիտրան, նիտրոֆոսը, նիտրոամոֆոսը, նիտրոֆոսկան, նիտրոամոֆոսկան և այլն:

Ամոֆոսի մեջ ազոտի պարունակությունը 9-12, իսկ ֆոսֆորինը (P2O2)՝ 42-52 տոկոս է:

Կալիումական սելիտրայի մեջ ազոտի հաշվեկշիռը կազմում է 13-13.5, կալիումինը (K2O)՝ 36-38.2, ֆոսֆորինը՝ 0.9-1.3 տոկոս:

Նիտրոֆոսկան դասական կոմպլեքս պարարտանյութ է, որում ազոտը, կալիումը և ֆոսֆորը հանդես են գալիս հավասար հարաբերակցությամբ (11:11:11): Սակայն ներկայումս թողարկվում են նաև նշված տարրերի տարբեր հարաբերակցություն ունեցող պարարտանյութեր: Պտղատու և տնամերձ այգիների համար խորհուրդ է տրվում նիտրոֆոսկան կիրառել 16:16:16 հարաբերակցությամբ, իսկ կանոնակարգված ջրային ռեժիմ ունեցող մշակաբույսերի համար ավելի նպատակահարմար է օգտագործել մագնեզիումի հավելումով նիտրոֆոսկան (15:10:12:2): Նիտրոամոֆոսկան (NH4H-2PO4+NH4NO3+KCl) ևս շատ տարածված կոմպլեքս պարարտանյութ է: Դրանում սովորաբար ազոտի, ֆոսֆորի և կալիումի հարաբերակցությունը 17:17:17 է: Սակայն, հաշվի առնելով մշակաբույսերի զարգացման փուլային առանձնահատկությունները, արտադրվում է նաև նիտրոամոֆոսկա 15:15:20, 13:13:24, 8:24:24, 10:26:26, 20:10:10 և այլ հարաբերակցություններով:

Նիտրոամոֆոսկայի կիրառման միջին նորմը մեկ հեկտարի համար կազմում է 250-300 կգ: Բանջարեղենի և կարտոֆիլի համար խորհուրդ է տրվում օգտագործել 25-30, պտղատուների համար՝ 40-50, հատապտուղների համար՝ 20-30, պաշտպանված գրունտում՝ 75-90 գ/մ² նորմով:

Բազմամյա պտղատուների տնկման ժամանակ փոսի մեջ կարելի է լցնել 350-400 գ նիտրոամոֆոսկա: Սնուցման համար պտղաբերող խնձորենու մեկ ծառին խորհուրդ է տրվում տալ 300-400 գ, բալենուն՝ 120-150 գ պարարտանյութ:

Որպես հիմնական պարարտանյութ, աշնանը կարելի է կիրառել միայն ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր ու գոմաղբ: Խորհուրդ չի տրվում ազոտական պարարտանյութերն օգտագործել աշնանը կորուստներից խուսափելու համար: Դրանք պետք է կիրառել գարնանը և վեգետացիայի ընթացքում:

Սովորաբար, հանքային պարարտանյութեր կիրառելուց առաջ անհրաժեշտ է հետազոտել հողը, պարզել հանքային տարրերով ապահովվածության աստիճանը, ծանոթանալ տվյալ մշակաբույսին անհրաժեշտ սնուցակարգին, ապա ճշտությամբ կատարել առաջարկվող միջոցառումները:

Լևոն Աճեմյան
Սպառողների ազգային ասոցիացիայի Գյուղդեպարտամենտի ղեկավար, Կենսաբանական գիտությունների թեկնածու

Առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաներ Զուգարանի թուղթ

Կան ապրանքներ, որոնք սպառվում են բացարձակ բոլորի կողմից՝ անկախ սեռից, տարիքից, դիրքից ու եկամուտից:

Զուգարանի թուղթն առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագա է: Սրա օգտագործման հարմարավետությունը պայմանավորված է առաջին հերթին ամրությամբ, փափկությամբ, նաև գլանաձև փաթեթավորմամբ: Այս ապրանքատեսակը լայնորեն կիրառելի է բոլոր ոլորտներում: Այն այսօր ծառայում է նաև որպես անձեռոցիկ, թղթե սրբիչ և այլն:

Զուգարանի թուղթն արտադրվում է թղթի թափոններից և պատրաստի հումքից: Արտաքին գեղեցիկ տեսքն ապահովելու համար այն երբեմն գունավորվում է, թեև հիմնականում նախընտրելի է սպիտակը, որը ևս հաճախ գունավորման արդյունք է:

Արտադրման ժամանակ օգտագործվող գունանյութերն ու բուրավետիչները մեծամասամբ հիպոալերգիկ են, այսինքն՝ դրանցից առաջացող ալերգիաների հնարավորությունը նվազագույնի է հասցված: Բարձրորակ գունանյութերի ու բուրավետիչների կիրառությամբ արտադրված զուգարանի թղթերը չեն կարող վնասել առողջությունը կամ դառնալ ալերգիայի պատճառ:

Թերությունները

1. Զուգարանի թուղթը կարող է արտադրված լինել վատորակ թղթից կամ վերամշակված հումքից՝ պատճառ դառնալով քորի և գրգռվածության, նաև մի շարք հիվանդությունների՝ թութքի, կանանց սեռական օրգանների հիվանդությունների, աղիներում բորբոքային պրոցեսների, անգամ ուղիղ աղիքի քաղցկեղի:
2. Այն կարող է վնասներ հասցնել, եթե արտադրված է թափոններից, որոնց բաղադրության մեջ սոսինձ կա:
3. Զուգարանի թուղթը երբեք չի կարող փոխարինել լոգանքին:

Որն ընտրել

Ինչ տեսականի ասես չի առաջարկվում սպառողին՝ հաստ ու բարակ, գունավոր ու անգույն, միաշերտ ու բազմաշերտ: Ընտրություն կատարելիս նախապատվությունը պետք է տալ ոչ թե արտաքին տեսքին, այլ առողջության համար անվնաս լինելուն:

1. Բարձրորակ թուղթն արտադրվում է բնական ցելյուլոզից, իսկ փաթեթավորումը պարունակում է (PSF) մակնշումը: Սա փափուկ է, զերծ վնասակար նյութերից, մասնավորապես՝ կապարից, ինչը չի կարելի ասել թափոններից արտադրված թղթի մասին, արագորեն կլանում է հեղուկը, լուծվում ջրում՝ խնդիրներ չառաջացնելով սանհանգույցում:
2. Բարձրորակ թղթի վրա կան կտրման համար նախատեսված հատվածներ:
3. Ցանկալի է հրաժարվել վառ գունավորմամբ ու սուր հոտերով թղթերից:

Ուշադրություն

1. Եթե զուգարանի գունավոր թուղթը ջրի մեջ մնալուց հետո փոխում է ջրի երանգը, նշանակում է, որ կամ օգտագործվել է էժան ու անորակ գունանյութ, կամ էլ թույլ են տրվել տեխնոլոգիական խախտումներ:
2. Կտրուկ պետք է հրաժարվել մուգ և անհարթ գունավորմամբ կամ տպագիր թղթերի օգտագործումից:
3. Բարձրորակ թուղթն էժան լինել չի կարող:
4. Զուգարանի թուղթը պահպանման ժամկետ չունի: Այն պետք է պահել չոր տեղում:

ԳԱԶ ՄԱՆՐԱԳԼԽԻԿ
Астрагал мелкоголовчатый
Astragalus microcephalus Wild.

Հայկական տարանունները - աստրագալ, արծվոց մոշի, գմազ, խազիրան, խազվիրան, հոսի, մուրիկ, ոս

Դեղաբույսի նկարագրությունը: Թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող, բազմամյա, մինչև 1 մ բարձրության կիսաթուփ է: Ծաղկում է հունիս-հուլիս, պտղակալում՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Աճում է չորուտներում, ռդերում ընդարձակ բուսուտներով: Դիմացկուն է ցրտի և երաշտի նկատմամբ, լուսասեր է, պտղակալում է կանոնավոր, բազմանում սերմերով:

Քիմիական բաղադրությունը: Այս բույսը պարունակում է բուսախեժ, որը դուրս է գալիս բույսի դեղնավուն արմատի բնական ճեղքվածքներից և վնասված մասերից: Այն թանկարժեք դեղորայքային և տեխնիկական հումք է՝ պարունակում է պոլիսախարիդներ, լորձ, ներկանյութ, օրգանական թթուների և ազոտական հիմքերի հետքեր: Բույսի առանձին տեսակներ պարունակում են նաև գլիցերիզինաթթու, ֆլավոնոիդներ, միկրոտարրեր:

Բուժական նշանակությունը: Բուժման նպատակով կիրառվում են բույսից ստացվող բուսախեժը, նաև բույսի վերգետնյա մասը: Բուժական նշանակություն ունի միայն սպիտակ խեժը:

Աշնանը կամ գարնանը հանած արմատներն օգտագործվում են ոգեթուրմի կամ փոշու ձևով: Վերգետնյա մասը (20 սմ երկարության չփայտացած ընձյուղները տերևներով ու ծաղիկներով) հավաքում են ծաղկման շրջանում, կտրում դանակով կամ մանգաղով, հողից 5 - 7 սմ բարձր: Այն պետք է չորացնել բարակ շերտով լավ քամհարվող տեղում: Լավ եղանակի պայմաններում 5 - 7 օրից պիտանի է պահեստավորման:

Գազն օգտագործվում է որպես միզամուղ, փսխեցնող, քրտնամուղ, հեմոստատիկ միջոց: Ամիրդովլաթը նշում է, որ գազի խեժն ունի ցավ հանգստացնող հատկություն, այն ներքին ընդունման ձևով օգնում է ստամոքսի խոցային հիվանդությանը, խառնելով եղերդակի և ծնեբեկի հյութերին՝ դրական է ներգործում դեղնուկի վրա: Արմատը, ծեծած վիճակում դնելով խոցակալած վերքերին, տալիս է լավ արդյունք, կամ գինով եռացրած, ներքին ընդունման ձևով, օգնում է լուծերի, արյունախխման և թոքաբորբերի ժամանակ, լավացնում է միզարձակումը, փափկեցնում հազը: Այն օգտակար է նաև ասթմայի, լեզվակի այտուցի, արյունամիզության և թարախամիզության դեպքում:

Կիրառման եղանակները: Ջրաթուրմ պատրաստելու համար 20 գ հումքը 1 ժամ թրմել 200 մլ եռման ջրում, քամել ու խմել 1-ական ճաշի գդալ օրը 3 - 6 անգամ: Եփուկ պատրաստելու համար 10 գ հումքը 30 րոպե եռացնել 100 մլ ջրում, հովացնել ու քամել, ապա ընդունել 1-ական ճաշի գդալ օրը 3 - 5 անգամ:

Այլ օգտակար հատկանիշներ: Գազը չափավոր մեղրատու է, ծառայում է որպես վառելանյութ և անասնակեր: Կան նաև գազի թունավոր տեսակներ:

Խեժն օգտագործվում է նաև հրուշակեղենի, տեքստիլ, թղթի, լաքերի, ներկերի, կաշվի և կոշիկի արդյունաբերության մեջ:

Գազի պաշարներն անսպառ չեն:

Արշավիր Թորոսյան
Հայաստանի դեղաբույսերը
Երևան, 1983

Համացանցային էթիկետ

Այսօր համացանցը ոչ միայն լայնածավալ տեղեկատվության աղբյուր է, այլև շփման անփոխարինելի միջոց։ Եվ այս ոլորտում էլ գոյություն ունեն էթիկետի նորմեր, որոնց պարտադիր պիտի հետևեն և օգտատերերը, և նրանց սպասարկող անձնակազմը։

Ուշադրություն

1. Համացանցում շփվելիս եղեք նույնքան քաղաքավարի, որքան իրական միջանձնային հաղորդակցման ժամանակ։
2. Հարգեք դիմացինի տեսակետն ու ժամանակը։ Մի ծանրաբեռնեք ուրիշներին ձեր խնդիրներով։ Նրանց իրենցն էլ բավական է։
3. Երբեք մի խախտեք դու-ի և դուք-ի սահմանը։
4. Մի զլացեք ձեր փորձն ու գիտելիքները կիսել զրուցակիցների հետ։ Շնորհակալ եղեք նրանց, ովքեր ժամանակ են հատկացնում ձեր հարցերին պատասխանելու համար։ Անուշադրության մի մատնեք ձեզ ուղղված անգամ ամենամիամիտ թվացող հարցերը։
5. Հնարավորինս զսպեք կրքերը։ Համացանցային բանավեճերն ու քննարկումներն արգելված չեն, թեև այս դեպքում ևս անթույլատրելի են վիրավորանքներն ու անհարգալից արտահայտությունները։
6. Հարգեք դիմացինի անձնական գաղտնիքները կամ անանուն մնալու իրավունքը, եթե անգամ նրա հետ շփվելիս դուք ներկայանում եք ձեր իրական անունով։
7. Մի հրապարակեք այլոց մասին տեղեկատվություն կամ հատվածներ ուրիշների նամակներից՝ առանց վերջիններիս համաձայնության։
8. Ճիշտ չէ միևնույն նամակը կամ գրությունն ուղարկել միաժամանակ հարյուրավոր օգտատերերի։
9. Աշխատեք մտքերը ձևակերպել հստակ ու շարադրել առանց տառասխալների։
10. Եղեք համբերատար և հանդուրժող զրուցակցի բացթողումների նկատմամբ, անգամ եթե նա իրեն թույլ է տալիս այդպիսին չլինել։

Առցանց զրույցի էթիկետ

Այստեղ ևս պարտադիր պայման է գրված ու չգրված կանոններին հետևելը։

Համացանցային առօրյա զրույցների ընթացքում աստիճանաբար ձևավորվում են հատուկ տերմինաբանություն, բառեր ու արտահայտություններ, որոնք այդպես էլ բնորոշ են մնում միայն գրավոր խոսքին։ Ինչպես ցանկացած զրույց, այստեղ էլ գոյություն ունեն զգացմունքներ, լավ կամ վատ վերաբերմունք տվյալ տեղեկատվության վերաբերյալ։ Ու հենց այս զգացմունքներն առավել դյուրին արտահայտելու համար մտածվել են մի շարք պայմանական նշաններ, այսպես կոչված սմայլիկները, որոնց կիրառումն ազատում է երկար-բարակ մտքեր շարադրելու անհրաժեշտությունից։ Բավական է հաղորդակցության կողքին տեղադրել համապատասխան խորհրդանիշը, և զրուցակիցն անմիջապես կհասկանա գոհ եք տվյալ տեղեկատվությունից, զարմացած



եք, թե զայրացած, ուրախ, թե հուսահատ:

Ճիշտ ընտրված նշանները գրավոր խոսքում գրեթե լիովին փոխարինում են կետադրական նշաններին ու ժեստերին: Մնում է միայն համոզված լինել, որ զրուցակցին էլ են ծանոթ այս նշանները:

Շփումը վեբկայքերում

Սա ոչ մի բանով չի տարբերվում կենդանի շփումից, պարզապես նորագույն տեխնոլոգիաներն առավել նկատելի են դարձնում այն չնչին բացթողումները, որոնք իրական շփման մեջ կարող են անտեսվել:

Վեբկայքերից օգտվողների համար գործում է մեկ հիմնական կանոն՝ չի կարելի առանց հեղինակի հետ նախնական համաձայնության տեղադրել ուրիշի մտավոր սեփականությունը: Հիշե՛ք, որ հեղինակային իրավունքի խախտումը քրեորեն պատժելի է:

Եթե վեբկայքերում տեղադրվում են տեղեկատվություն, լուսանկարներ կամ տեսանյութեր, նախատեսված կոնկրետ տարիքային խմբի համար, ապա այդ մասին պիտի նշվի տեսանելի հատվածում:

Տվյալ կայքից օգտվելն առավել արդյունավետ է դառնում, եթե նշված է լինում վերջին թարմացման ամսաթիվը: Եվ, վերջապես, տվյալ էջն ավելի հեշտ է գտնել, եթե ունի պարզ, հասկանալի և հեշտ հիշվող անուն:

Համացանցային անվտանգություն

Սա ամենակարևորն է, քանի որ ցանցահենները գործում են առանց դադարի: Նրանք միշտ պատրաստ են ծեզանից ստանալու իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը կամ վարակելու ձեր համակարգիչները տարատեսակ վիրուսներով: Այս նպատակով հաճախ ուղարկվում են նամակներ, որոնցում առաջարկվում են կատարել այս կամ այն հրահանգները, անցնել այս կամ այն հղումով: Այս առումով առավել խոցելի են դեռահասներն ու երեխաները:

Խուսափելու համար այս ամենից հարկավոր է.

- չհրապարակել գաղտնաբառերը,
- հրաժարվել անձնական տեղեկություններ ու լուսանկարներ, նաև հեռախոսահամար տեղադրելուց՝ առանց ծնողների համաձայնության,
- անարձագանք թողնել անծանոթներից ստացված ցանկացած կասկածելի գրություն, նամակ կամ առաջարկ,
- պետք չէ շտապել հանդիպել օնլայն հարթակում ձեռք բերած ընկերների հետ, այն էլ առանց ծնողների իմացության, քանի որ նոր ընկերները կարող են իրենց ներկայացնել ոչ այնպիսին, ինչպիսին իրական կյանքում են,
- հրաժարվել այն գործարքներից, որոնք ֆինանսական ներդրում են պահանջում,
- անպայման համաձայնեցնել, նոր միայն համացանցում տեղադրել այլ մարդկանց լուսանկարները:



Գարուն 2018

2018-ի գարունը պատրաստվում է ցնցել բոլորին անսպասելի կտորների, գործվածքների և գույների ընտրությամբ: Այս գարունը լի կլինի 2000-ականների սկզբին բնորոշ միլենիալ վարդագույնով, ռետինե կոշիկներով և պայուսակների ու աքսեսուարների անսպասելի ընտրությամբ:

Այս գարնան և գալիք ամռան ամենանոճային գույնը կլինի նրբագույն և ռոմանտիկ լավանդան: Մանուշակագույնի այս բաց երանգը կարող եք կրել պիջակների, պայուսակների, տաբատների, զգեստների և զարդերի տեսքով: Սեզոնի գլխավոր թրենդը բաց վարդագույնի և վառ կարմիրի համադրությունն է:

Սպիտակ. դժվար թե որևէ մեկը կարողանա հրաժարվել էլեգանտ սպիտակ կոստյումից, ամբողջական սպիտակ լուքից կամ սպիտակ անթև շապիկից (փորձե՛ք քրքրված կամ մոնոքրոմ փրինթներով տարբերակները):

Թափանցիկ. սա այն բացառիկ միտումն է, որը նկատելի է գրեթե բոլոր դիզայներների մոտ: Վստահորեն ընտրեք թափանցիկ կոշիկներ, պայուսակներ, զարդեր և, ինչու ոչ, նաև զգեստներ ու գլխարկներ, և ձեր ոճային լուքն ապահովված է:

Չնայած, որ ծաղկային ու ծիածանային փրինթները պահպանում են իրենց դիրքերը գարնանը, այնուամենայնիվ սև ու սպիտակ պուտավոր փրինթը կլինի այս գարնան գլխավոր փրինթային թրենդը:

Թրենդային են շարունակում մնալ այդքան ռոմանտիկ փետուրներն ու փետրավոր աքսեսուարները: Նորաձև են նաև տարատեսակ զարդանախշերով, ուլունքներով և քարերով զարդարված կապիչները, որոնք, վստահաբար, ավելի հետաքրքիր և տարբերվող կդարձնեն ձեր կերպարը:

Որքան էլ զարմանալի թվա, դիզայներների կողմից ներկայացված յուրահատուկ սիլուետներով ռետինե հագուստը, կոշիկներն ու աքսեսուարներն այս տարվա գլխավոր թրենդներն են:

Սեզոնի գլխավոր միտումներից են վզի քառանկյուն և ասիմետրիկ ձևվածքները: Վերջիններս կարծես խաղում են պարանոցի հետ՝ ընդգծելով նրա կանացիությունն ու նրբությունը: Նորաձևություն են վերադառնում վինտաժի սիրահարների կողմից այդքան սիրված նրբագեղ ուռուցիկ ուսերը:

Այս սեզոն, չհրաժարվելով մեր այդքան սիրելի վինտաժային ջինսերից, կարող ենք մեր զգեստապահարանը համալրել նաև վերածնունդ ապրող մուգ ջինսերով:

Չափազանց նորաձև են ծղոտե գլխարկները՝ ամենափոքրիկ շանելյան տարբերակներից մինչև անսպասելի մեծերը:

Մի շարք նորաձևության տներ նոր կյանք են տվել 90-ականների սուր ծայրերով ակնոցներին, որոնք իրենց գույների և չափերի ընտրությամբ ինքնավստահություն կհաղորդեն ձեր տեսքին:

Պայուսակ

Այս սեզոն այլևս անհնար է հրաժարվել, այսպես կոչված, ֆաննի պայուսակներից: Նրանք կարող են լինել ցանկացած չափի և ձևի՝ ամենափոքրիկներից մինչև զգալի մեծերը, մինիմալիստականից մինչև ուլունքներով և զարդանախշերով պատված:

Դե իսկ կաշվե մեծ պայուսակներն իրենք իսկ կթելադրեն ձեր լուքը: Դրանք կարող են լինել բազմազան՝ քարե դետալներով, ծղոտի և փետուրների համադրությամբ, նկատելի մեծ չափերի բրենդային լոգոներով: Նորաձև են շարունակում մնալ նաև փոքրիկ պայուսակները:

Կոշիկ

Նորաձևության շաբաթները Փարիզում, Միլանում և Լոնդոնում հստակ սահմանում են, թե ինչպիսի կոշիկներն են նորաձև լինելու գալիք սեզոնին: Այս գարունը ևս բացառություն չէ:

Այսպիսով, ինչպես հագուստի յուրաքանչյուր այլ դետալում, կոշիկների մեջ ևս թափանցիկն այս տարի գերիշխող դեր է գրավում: Այն ներկայացված է մի շարք դիզայներների հավաքածուներում:

Նորաձև են նաև սրածայր կոշիկները բազմազան քարային և մետաղային դետալներով, փետուրներով և նախշերով: Իսկ ամենաառճայինը լինելու համար վստահորեն կրեք ամառային բաց կոշիկները երկար գուլպաների հետ:

Տղամարդկանց նորաձևություն

Ինչպես անցած սեզոն այս սեզոն ևս տղամարդկանց նորաձևությունը միաձուլում է այդքան սիրված երկու ոճերը՝ դասականն ու սպորտայինը: Գունային զանազան մուգ ու բաց լուծումներն ու համադրությունններն ընտրության լայն հնարավորություն են տալիս նորաձևության վերջին թրենդներին հետևող տղամարդկանց:

Այսպիսով, տղամարդկանց նորաձևության մեջ այս տարվա գլխավոր գույներն են վառ կարմիրն ու գինու գույնը, դարչնագույնն ու մարմնագույնը, խակ կանաչը և, իհարկե, սպիտակը:

Այս սեզոն դիզայներները, կարծես, որպես ոգեշնչման աղբյուր, ընտրել են հայտնի վիդեոխաղերի հերոսներին: Մոդելները զանազան են ու տարբեր՝ կարճ շորտերից մինչև դասական տաբատներ, ամբողջովին քրքրված վերնազգեստներից մինչև սոլիդ վերնաշապիկներ ու կոստյումներ: Գլխավոր թրենդներից սև և սպիտակ T-աձև շապիկները նորաձև են հատկապես թերթային և այլ գրառումներով փրինթներով:

Կրկին նորաձև են այդքան շատ սիրված հովարավոր գլխարկները՝ կեպիները՝ ցանկացած գունային ընտրությամբ:

Կոշիկ

Տղամարդկանց կոշիկների մեջ ևս գերիշխող տեղ են գրավում սպորտային կոշիկները, որոնք ամբողջովին դասական լուքի հետ ներկայացնելն այլևս ոչ միայն զարմանալի չէ, այլև սպասված և աչք շոյող:

Շարունակում են նորաձև մնալ նաև դասականի և սպորտայինի համադրությամբ կոշիկները և, իհարկե, մշտապես իրենց կայուն դիրքը պահպանող դասական կաշվե կոշիկները՝ քուղերով և առանց դրանց:

Պայուսակ

Պայուսակները հիմնականում մեծ չափսեր ունեն: Դրանք ևս պահպանում են թրենդային գույները, ինչպիսիք են կարմիրը, խակ կանաչն ու գինու գույնը: Դիզայներներն իրենց հավաքածուներում պայուսակները ևս ներկայացրել են արդեն իսկ այդքան թրենդային թերթերի մոնոքրոմ փրինթներով:

Դիանա Գևորգյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻ 15-Ը ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է.....2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....6

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ.....7

2018 Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....8

ԱՆՎՏԱՆԳ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ԳԱԶԱՍՊԱՌՈՒՄ
«ԷՅ-Ի-ՋԻ ՍԵՐՎԻՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ.....14

ԾԽԱԽՈՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ,
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....19

ՕԴԻ ՄԱՔՐՈՒՄ, ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԾԽԻ ՉԱՓԱԳՐՈՒՄ.....23

ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՃԻՇՏ ԿԻՐԱՌՈՒՄԸ.....24

ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՀԻԳԻԵՆԱՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐ.
ԶՈՒԳԱՐԱՆԻ ԹՈՒՂԹ.....26

ԲՈՒՅՍ. ԳԱԶ ՄԱՆՐԱԳԼԽԻԿ.....27

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ.....28

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ. ԳԱՐՈՒՆ 2018.....30

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
Թեժ գիծ՝ (010) 24-92-04
E-mail: info@armconsumer.am;
nationalconsumerassociation@yahoo.com
URL:http//www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 2 մամուլ
Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՄ տպագրատանը
Բաժանվում է անվճար
Գրանցման վկայականը՝ 2215
Հղումը ՍՊԱՌՈՂ-ին պարտադիր է

AEG SERVICE

+ 374 10 23-93-27
+ 374 10 29-75-31
aeg@aegservice.am

Ներտնային գազասպառման համակարգերի
տեխնիկական սպասարկման
ծառայությունների մատուցում

Մեր աշխատանքը
Ձեր անվտանգության երաշխիքն է

www.aegservice.am

www.armconsumer.am